

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Գյումրի քաղաքի «ԱՐԵՎԻԿ» մանկապարտեզի վերակառուցման նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի , գործող շինարարական նորմերի և կանոնների: Ջրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են ներքին և արտաքին հետևյալ համակարգերը՝

- ա. խմելու տնտեսական ջրամատակարարում
 - բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի
- Նախագծային լուծումները ընդունված են համաձայն CHиП 2.04.01-85
- Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն CHиП 3.05.01-85

ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Վերակառուցվող մանկապարտեզի ջրամատակարարման ներքին , ինչպես նաև արտաքին համակարգը գտնվում է վթարային վիճակում, ուստի անհրաժեշտություն է առաջացել փոխել նաև արտաքին համակարգը , ջրամիացումն իրականացնելով նույն ջրագծից: Հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար ջրամիացման մոտ նախատեսված է կառուցել հոր՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից , սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով, կարգավորիչ փականով , Ø25 մմ. տրամաչափի ջրաչափական հանգույցով և հակահրդեհային հիդրանտով : Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսված է իրականացնել՝ մինչև մասնաշենքերի մոտ D50x5.8 , իսկ դեպի մասնաշենքեր՝ D40x3.7 և D32x3.0 պոլիէթիլենե, իսկ հորի մեջ՝ հակահրդեհային հիդրանտի տեղադրման համար Ø 108x4.0 մմ. տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից, ուժեղ հակակոռոզիոն մեկուսացումով ГОСТ 10704-91:

Ջրամատակարարման խողովակաշարը նախատեսվում է իրականացնել 1.4 մ. միջին թաղման խորությամբ:

Յուրաքանչյուր մասնաշենհի համար նախատեսված է մեկ մուտքագիծ : Կոյուղու հմակարգի հետ հատման մասերում ջրագծի խողովակը 5.0մ հատվածով ջերմամեկուսացվում է ֆալգայապատ հանքային բամբակե շերտով:Մուտքագծերի անցքը պատվում է ջրագազանթափանց էլաստիկ նյութով:

Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է : Ջրամատակարարման ներքին համակարգը նախատեսված է իրականացնել՝ D 32x4.4 ; D 25x3,5 ; D 20x2,8 ; D16x2,2 պոլիպրոպիլենե խողովակներից: Տաք ջրամատակարարման սնուցումն իրականացվում է մանկապարտեզի տանիքում նախատեսվող լոկալ արևային տաքացումով նախատեսված երկկոնտուրանի ծավալային ջերմափոխանակիչից:

ՏՆՏԵՍԱ -ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ (Կ1)

Համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել ներքին ցանցի համար D 63մմ և D 110մմ , իսկ արտաքին համակարգինը՝ D 160մմ տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) լայնուկավոր խողովակներից TY 21-26-100-80:

Կոյուղու նորիզոնական միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով:

Խոհանոցում խոհանոցային կոնքերի միացումը կոյուղու համակարգին իրականացվում է 2 մմ շիթի ընդհատումով :

Կոյուղու արտաքին համակարգի միացման տեղերում, շրջադարձային անկյուններում, թեքությունների և տրամագծերի փոփոխության, ինչպես նաև ուղիղ հատվածներում համապատասխան թույլատրելի հեռավորության վրա նախատեսվում են կառուցել դիտահորեր:

Կոյուղու համակարգի բոլոր դիտահորերը՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից են, սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով:


Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 1.3 մ. միջին թաղման խորությամբ:



Ջրամատակարարման և Կոյուղու Հաշվարկային ելքեր				
Համակարգի անվանում	պահանջվող ճնշում Մ.	հաշվարկային ելքեր		
		Մ³/օր	Մ³/ժամ	լ/վրկ
Սառը ջրամատակարարում	16.0	10.5	2.75	1.65
Տաք ջրամատակարարում	16.0	3.5	1.38	0.88
Կոյուղի		9.45	2.25	1.6

Աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր			
Թերթ	Անվանումը	թերթերի համարը	թերթերի քանակը
1	ԸՆԴՀՆԱՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԲԱՑԱՏՐԱԳԻՐ)	ՋԿ-1	16
2	ՆԵՐՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ	ՋԿ-2	16
3	ՆԵՐՔԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ	ՋԿ-3	16
4	ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ	ՋԿ-4	16
5	ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ	ՋԿ-5	16
6	ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	ՋԿ-6	16
7	ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	ՋԿ-7	16
8	ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	ՋԿ-8	16
9	ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	ՋԿ-9	16
10	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԽԵՄԱ /1- ԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ/	ՋԿ-10	16
11	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԽԵՄԱ /3- ԲԴ ՄԱՍՆԱՇԵՆՔ/	ՋԿ-11	16
12	ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԽԵՄԱ	ՋԿ-12	16
13	ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՋԿ-13	16
14	ԿՈՅՈՒՂՈՒ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՋԿ-14	16
15	ԿՈՅՈՒՂՈՒ ՏԻՊԱՅԻՆ ՀՈՐ, ԿՏՐՎԱԾՔ, ՀԱՆԳՈՒՅՅՆԵՐ	ՋԿ-15	16
16	ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ՀՈՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ	ՋԿ-16	16

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Ս — ՍԱՌԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ
- Տ — ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ
- Շ — ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԽՈՂՈՎԱԿ
- Կ — ՏՆՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԽՈՂՈՎԱԿ
- Շ Շ — ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԻԴՐԱՆՏ
- Գ — Մաքրիչ
- Ս — Ստուգիչ
- Ա — Անցում
- Շ — Հոսակ
- Ø50



ԾՐԱԳՐԻ ԱՈԱԶԱՐԱՆՔ՝ TSH-12				ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ			
				ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
					ԱՆ	1	16
Լախագծեց	Գ. ԵՂՈՅԱՆ			ԸՆԴՀՆԱՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ԲԱՑԱՏՐԱԳԻՐ)		<u>ԻՆՏԵՐ</u> ԵՆԵՐԳԻԱ ՍՊԸ	
ՆԳՃ							
ՊԱՇՏՈՆ	ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.					